ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

01.01.2012թ. – 01.04.2012թ. ընկած ժամանկահատվածում քաղաքապետարանի կատարած աշխատանքները

Դիլիջան համայնքի 2012թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը:
Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

2012թ. առաջին եռամսյակում տեղական մուտքերի արդյունավետ հավաքագրման շնորհիվ հավաքագրվել է 61754.8 հազ.դրամի եկամուտ, որը հնարավորություն է տալիս ավելի իրատեսորեն կանխագծելու առաջիկա անելիքները:

Դիլիջան համայնքի բյուջեի եկամուտների կատարողականը
01.04.2012թ. դրությամբ

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազ.դրամ)	Մարտի պլանը աճողական տեսքով (հազ.դրամ)	Մարտի կատարո-ղականը աճողական տեսքով (հազ.դրամ)
ԸՆԴԱՄԵՆԸ	301085.11	61934.20	61754.77
1.1 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ	45724.70	5626.70	5353.62
1.2 ԳՈՒՅՔԱՅԻՆ ՀԱՐԿԵՐ ԱՅԼ ԳՈՒՅՔԻՑ	19000.00	3000.00	4932.68
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	15189.00	3496.50	3937.55
ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ	4200.00	1050.00	778.00
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	163070.90	40648.50	40648.50
3.3 ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	29000.00	4498.00	3800.02
ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿ-ԻՑ ԵՎ ԾԱՌԱՅ-ՐԻ ՄԱՏՈՒՑ-ԻՑ ԵԿԱՄ-ՆԵՐ	1700.51	339.50	340.10
3.5 ՎԱՐՉԱԿԱՆ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ	20000.00	2900.00	1910.00
3.6 ՄՈՒՏՔԵՐ ՏՈՒՅԺԵՐԻՑ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻՑ	2000.00	375.00	54.30
ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1200.00	0.00	0.00
ԸՆԴԱՄԵՆԸ	301085.11	61934.20	61754.77

Դիլիջան համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը 01.04.2012թ. դրությամբ

Ծախսատեսակ / Հիմնարկ	Տարվա պլանը (դրամ)	Ամսվա պլանը (դրամ)	Փաստացի ծախսը (դրամ))
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	567734736.00	245083826.00	61928021.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Աղբահանում)	33600000.00	5276750.00	5259998.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Այլ մշակույթային կազմակերպություններ)	1819600.00	859400.00	751500.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Արտադպ. դաստիարակություն)	44133800.00	7628700.00	6230992.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանայի շինարարության և կոմունալ ծառայություններ)	4010300.00	972575.00	879025.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Բնակարանային շինարարություն)	5000000.00	3000000.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գյուղական խորհրդատվական ծառայություն)	30000.00	30000.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Գրադարաններ)	14960000.00	2739900.00	2508957.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Դիլիջանի քաղաքապետարան)	81028000.00	23024175.00	13237647.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընդհ.բնույթի հանր.ծառայություններ)	2575000.00	1012000.00	166000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ընտանիքի անդամներ և զավակներ)	2500000.00	800000.00	270000.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Թանգարաններ և ցուցասրահներ)	19596000.00	3509000.00	3500412.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ)	184800.00	184800.00	184800.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Հրատարակչություններ,խմբագրություններ)	360000.00	90000.00	28499.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ճանապարհային տրանսպորտ)	83000000.00	83000000.00	3103550.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Մշակույթի տն"ր, ակումբներ)	60964000.00	48303500.00	2502640.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Նախադպրոցական կրթություն)	130282700.00	19831900.00	16586719.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Սոցիալական հատուկ արտոնություններ)	980000.00	370000.00	315440.00

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Վարչ.բյուջեի պահուստային ֆոնդ)	13028656.00	178656.00	0.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Փողոցների լուսավորում)	40832000.00	17032000.00	6083798.00
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդ)	26817626.00	26817626.00	0.00
ԸՆԴԱՄԵՆԸ ՝	567734736.00	245083826.00	61928021.00

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները: 15 անապահով ընտանիքների տրվել է դրամական օգնություն:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 15 ընտանիքի տրվել է միանվագ դրամական օգնություն:

Դիլիջան քաղաքում գործող <Հոյսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն:

Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների թվով 88 աշխատողների տրվել է ֆինանսական աջակցություն հերթական բժշկական ստուգումների անցկացման համար:

Հունվարի 27-ին Դիլիջանի զորամասում համայնքի ղեկավարի աջակցությամբ կազմակերպվել է համերգ-հանդիպում նվիրված բանակի օրվան: Հայրենական մեծ պատերազմի կին մասնակիցներին մարտի 8-ի կապակցությամբ տրամադրվել է դրամական օգնություն:

Պատվիրվել է Աբովյան և ՈՒսանողական փողոցների ավտոտրանսպորտի երթևեկելի մասի ասֆալտ/բետոնե ծածկի փոսային նորոգման նախագծա-նախահաշվային աշխատանքներ, ինչպես նաև Թիվ 4 մանկապարտեզի հիմնանորոգման նախագծա-հախահաշվային աշխատանքներ:

Սկսվել են քաղաքի կենտրոնական հատվածում գտնվող հնգաթև հուշարձանի և դրան հարակից օղակաձև խաչմերուկի տարածքների բարեկարգման և ճարտարապետական ձևավորման աշխատանքները:

Վերանորոգվել է թիվ 2 մանկապարտեզի ջրամատակարարման, ջրահեռացման և ջեռուցման համակարգերը:

Քաղաքապետարանը միջոցներ է ձեռնարկում իր ենթակայության ենթակառույցների նյութատեխնիկական բազայի ամրապնդման ուղղությամբ:

Զգալի աշխատանքներ են իրականացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման, այն առողջարանային քաղաքին վայել կազմակերպեու ուղղությամբ:

Քաղաքապետարանի կողմից անհրաժեշտ ուշադրություն է ցուցաբերվում սպորտի զարգացմանը :

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ